Հայ գրականություն, Արձակ, Պատմվածք

13+

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ՄԵՂԵԴԻՆ

Պատկեր

(Հայրիկի հիշատակին)

Ներսը շոգ լինելուն համար, հայր սուրբը հրավիրեց մի թեթև ընթրիք անել ու ելնել բակի մեծ պարտիզի ցանկորմի առաջ, ուր դրված կար արդեն սեղանը:

Լուսնկա գիշեր էր: Ծառերն ու բլուրները կարծես մեծացել էին, ավելի նոսրացել, հատ-հատ ճյուղերովն ու տերևներով դրոշմվել էին կաթնագույն խորքի վրա:

Պարտիզի ներսում եղած ծաղկանոցի բուրմունքը, շատրվանի մրմունջն ու մեղմիկ, զովացուցիչ քամին՝ կենսապարար հեշտություն էին սփռում մեր շուրջը:

Լռությունը խորունկ էր: Ոչ մի ոտնաձայն, Վանքն ամբողջ՝ նիրհում էր:

Ցանկորմից ներս, ծառերի թավուտի մեջ, բուրաստանի կենտրոնում ցցվում էր կանաչագեղ մի հովանոց:

Կաթողիկոսական հանգստարանն էր այն:

Խոտերի մեջ դրած լապտերն ու հայր սուրբի շշուկով խոսելն ապացուցին, որ ծերունի Հայրապետը գտնվում էր մեզնից միայն տասը քայլ հեռավորության վրա:

Սիրում էր ծերունին նստել այնտեղ, այդ ստվերամած ծառերի մթին խորշերի մեջ: Սիրում էր մնալ երկար, թիկն տված բարձին, սպիտակահեր գլուխը մի ձեռքի վրա հանգչեցրած, աչքերը տարածության մեջ մոլորուն:

Ու տեսնում էր նրան լապտերի աղոտ լույսի տակ: Դեմքի մի մասն էր միայն երևում. մի տխուր, թախծալից ու մեռելատիպ մաս, որ հաճախ ծածկվում էր բերնից ելնող տարածվող գլանակի ծուխովը:

Եվ ճնշված սրտով, աչքերս հեռացնել չէի զորում:

Ի՞նչ էր մտածում արդյոք՝ դարերի վշտերը տեսած ալևորը. գանգը ինչպիսի՞ փոթորիկներով էր լեցուն, որպիսի մտքերով երերուն, որպիսի երազներով մտատանջ նայում էր նա հեռուն, հեռուն.. .

Անշուշտ մոռացած պիտի լիներ գտնված տեղը. վանքի սև պատերը հալված պիտի լինեին նրա մտածության բուռն թռիչքների առաջ և միտքը սրացել էր գուցե հեռավոր հայրենիքի

այն դրախտանման անկյունը, ուր մեծացել էր նա և ուր իր խոհերը հաճախ պիտի ոստնելիս լինեին անձկանոք հիշելու լեռ ու դաշտ, ջուր ու ծով.. .

Ու երազկոտ էի դառնում ես էլ. երազկոտ՝ նույն խոհերով, նույն անձկություններով.. .

Պարտեզը, ալևոր Հայրապետի թախծոտ կիսադեմքը, լուսնկա լուռ գիշերն ու ջրի մեղմիկ մրմունջը ինձ ևս տարան հեռու, շատ հեռու, դեպի հայրենիքն՝ ուր մեն մի ծառը, մեն մի առվակն ու վտակը, լեռն ու դաշտավայրը կարոտի վիշտն են գոյացնում իմ մեջ ևս...

. . . Եվ ահա հանկարծ, խոր — շատ խոր տեղերից, կարծես հայրենիքի խորշերից և կամ սրտիս ամենաջերմ անկյունից, ուր արտասուքներ կան դիզած — տխուր, աղիողորմ ու կսկծեցուցիչ մեղեդի եկավ ցնցելու էությունս համակ:

Ջղերս լարվեցին, շունչս բռնած՝ պահ մի ականջ դրի, զգացի գունատվիլս, կոկորդս սեղմվեց ու աչքերս թրջվեցին.. .

Իսկ մեղեդին այն թովիչ՝ ծորում էր հետզհետե թավալուն վտակի, զղզուն առվակի նման հնչելով. առվակ, որ կարծես գալարվում էր գիներբուկների ու շուշանների միջով և գալիս էր իր ջրերը պարզելու աննման ծալքերով՝ մեղմիկ, ցավագին. ..

Ու դարձա. համակ լսողություն եղա. չկամեցա ոչ իսկ մի խազ կորցնել այն ջղեր հալեցնող՝ տանջանքներով լի երգից, որ թրթռում էր լուռ օդի մեջ և ցնդում վերևներում՝ կարծես հանգչելով տերևների մեջ:

Ծերունի Հայրապետն էր այն: Ալևորի դողդոջումն, սիրտ պատռող քաղցր ձայնով հնչեցնում էր նա մի նվիրական մեղեդի. մեկն այն նվագներից, որոնք անշուշտ կազմված են վշտի խազերից, տանջանքի ցնցումներից:

Եվ անշուշտ այդ իսկ բոպեին վերացրել էր ալևորը մտքով դեպի հայրենի լեռները, դեպի անուշ և անզուգական դաշտերը, ու նրանց էր նվիրում իր կարոտանաց զեղուն արտահայտությունը, ամփոփելով ճնշող մեղեդիի մեջ, դնելով նրանում և՛ հրճվանք, և՛ վիշտ, և՛ հուսահատ անկարողություն, և՛ երազկոտ անձկություն.. . Ամեն, ամեն ինչ, որ կարող է գոյանալ մի շատ տանջված մարդու, խորապես կքված ծերունու զգայուն սրտում.. .

Կյանքիս մեջ երկրորդ անգամն էր, որ լսում էի Հայրիկի երգելը:

Առաջին Վանում, չարչարանաց մի ուրբաթ գիշեր, երբ նա մեծ տանջվողի վշտերի երգն էր հնչեցնում:

Եվ երկրորդը՝ այդ երեկո, երբ իր, անկարողության մատնված ծերունու՝ դառնացած հոգու ցնցումներն էր հայտնում լուսնկա գիշերին, Էջմիածնի հնամյա վայրերի խորշերին.. .

Ու հուզմունքից գլուխս դրի ցանկորմի ճաղերին, զգացի, ըմբռնեցի ծերունու մեղեդին և... լացի:

Իսկ մեղեդին այն վսեմ՝ ծորում էր, ծորում վշտալից, ծորում՝ ջինջ ծալքերով ջրերի նման. և նրա մե՛ն մի խազը, մե՛ն մի հնչյունը արտահայտում էր խորին վիշտ, տանջանք և անձկություն...